ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. փետրվարի 17-ից փետրվարի 21-ը ք. Լյուբլյանա (Սլովենիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արմինե Ասրյան - ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի պետ

Ալվարդ Ղուկասյան - ՀՀ ՊԵԿ Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության խոշոր հարկ վճարողների վերլուծության և մոնիտորինգի բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սլովենիայի Հանրապետություն, ք. Լյուբլյանա, փետրվարի 17-ից 21-ը

3. Հրավիրող կողմը՝

Հարավ-արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոն (Center of Excellence in Finance in the South East Europe/CEF)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել Հարավ-արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի (Center of Excellence in Finance in the South East Europe/CEF) կողմից կազմակերպված «Կանաչ հարկում» (Green Taxation) թեմայով դասընթացին, ուսումնասիրել կանաչ հարկման և ածխածնի սահմանային ճշգրտման մեխանիզմի (CBAM - Carbon Border Adjustment Mechanism) ներդրման փորձը և դրա ազդեցությունը ներմուծվող և տեղական արտադրանքի վրա, առաջարկել քաղաքականության փոփոխություններ, որոնք կապահովեն հարկային եկամուտների կայունությունը և կանաչ տնտեսության զարգացումը:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. փետրվարի 18-ից 20-ը կայացած «Կանաչ հարկում» (Green Taxation) թեմայով դասընթացին քննարկվել են հետևյալ թեմաները.

- արդյունավետ բնապահպանական բարեփոխումներ,

- հանրային իրազեկման և շահագրգիռ կողմերի ներգրավվածության վերաբերյալ կարգավորումներ,
- «Կանաչ հարկման» (Green Taxation) բարեփոխումների հաջող օրինակներ,
- CBAM-ի ազդեցությունը Հյուսիսային Մակեդոնիայի վրա, ինչպես նաև Արևմտյան Բալկաններում,
- Նիդերլանդների կլիմայական քաղաքականությունը, պլաստիկի մասով հարկերի ներդրումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Լյուբլյանայում անցկացվող դասընթացին մասնակցել են աշխարհի տարբեր պետությունների հարկային քաղաքականության և վարչարարության համար պատասխանատու անձինք: Դասընթացի շրջանակում Նիդերլանդների ֆինանսների նախարարության, Կայուն էներգետիկ անցման Կենտրոնի (RESET), Համաշխարհային բանկի ներկայացուցիչների, ինչպես նաև CEF-ի գիտաշխատողների կողմից ներկայացվել և քննարկվել են ածխածնի սահմանային ճշգրտման մեխանիզմի (CBAM) էությունը, նպատակները, դրա ներդրման ազդեցությունները, դրանք կառավարելու համար անհրաժեշտ ռազմավարության տարբերակները, ինչպես նաև մոտեցումները կլիմայական փոփոխության հարցերին, պլաստիկի մասով հարկերի ներդրման տարբերակները և այլն:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, հարկային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկվում է ստեղծել գործողությունների պլան ՀՀ-ում CBAM-ի ազդեցության գնահատման և վերլուծության համար, կատարել խորացված ուսումնասիրություն տեղական շուկայի և ներմուծվող ապրանքների վերաբերյալ, վերլուծել, թե որ հարկային արտոնություններն են խոչընդոտում կանաչ քաղաքականությանը և առաջարկել

փոփոխություններ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել սեմինարներ և հանրային քննարկումներ՝ CBAM-ի և կանաչ հարկերի վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արմինե Ասրյան

Ալվարդ Ղուկասյան

25.02.2025թ